ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ԱՌԱՆՁԻՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ
ՓՈՐՁԱԳԵՏ ՆԵՐԳՐԱՎԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Բարձրաստիճան պաշտոնատար անձանց էթիկայի հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով «Հանրային ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության 23.03.2018 թվականի ՀՕ-206-Ն օրենքի 10-րդ հոդվածի 2-րդ մասով, «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 02.08.2018թ. N 878-Ն որոշման հավելվածի 2-3-րդ, 6-7-րդ և 9-րդ կետերով, հայտարարում է Հանձնաժողովի առանձին խնդիրների իրականացման համար փորձագետ ներգրավելու մասին:

1. Փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագրով նախատեսված աշխատանքների համառոտ նկարագիրը.

Փորձագետը ՝

1) իրականացնում է բարեվարքության հարցերով (այդ թվում՝ հանրային էթիկային, շահերի բախմանը, սահմանափակումներին) առնչվող ուսումնասիրություններ, այդ թվում՝ միջազգային փորձի ուսումնասիրություն.

2) իրականացնում է հայտարարագրերի վերլուծություն և արդյունքները ներկայացնում Հանձնաժողովի նախագահին.

3) կոռուպցիայի դեմ պայքարին առնչվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ նախապատրաստում է մասնագիտական կարծիքներ.

4) մասնակցում է Հանձնաժողովի կողմից կոռուպցիայի կանխարգելմանն առնչվող սեմինարների, թրեյնինգների՝ համապատասխան նյութերի մշակման աշխատանքներին.

5) աշխատանքների ծրագրով սահմանված ժամկետներում Հանձնաժողովի նախագահին է ներկայացնում կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ:

2. Փորձագետին ներկայացվող պահանջները.

Փորձագետը՝

1) ունի բարձրագույն կրթություն, առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ կամ գիտական աստիճան և առնվազն մեկ տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, կամ պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ.

2) ունի ՀՀ Սահմանադրության, ոլորտային օրենքների և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն.

3) տիրապետում է անգլերեն (ազատ) և ռուսերեն (ազատ) լեզուներին.

4) ունի համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

3. Պայմանագրի գործողության ժամկետը 3 (երեք) ամիս է:

4. Դիմումները ներկայացնելու վերջնաժամկետն է 2018 թվականի նոյեմբերի 26-ը (ներառյալ):
5. Աշխատանքի վայրն է՝ ք. Երևան, Բաղրամյան 24:
6. Հեռախոսահամար՝ +374 (10) 52 46 89, էլեկտրոնային փոստի հասցե՝ info@ethics.am:
7. Չի թույլատրվում հավակնորդի հետ պայմանագիր կնքել, եթե տվյալ անձը պաշտոնից ազատվել կամ տվյալ անձի ծառայությունը վերջին մեկ տարվա ընթացքում դադարեցվել է կարգապահական տույժ կիառելու, օրենքով սահմանված փորձաշրջանը չանցնելու, օրենքի խախտմամբ պաշտոնի նշանակվելու, «Հանրային ծառայության մասին» ՀՀ օրենքով սահմանված անհամատեղելիության պահանջները չպահպանելու, ՀՀ քաղաքացիությունը դադարեցնելու, ուժի մեջ մտած՝ նրա նկատմամբ կայացված մեղադրական դատավճռի դեպքերում, բացառությամբ այն դեպքերի, երբ նշանակվել է տուգանք, ինչպես նաև երկու տարի անընդմեջ իր մեղքով վերապատրաստման անհատական ծրագրով հաստատված կրեդիտները չստանալու դեպքում:
8. Անհրաժեշտ փաստաթղթերի ցանկը.
   1) մասնագիտական գիտելիքները, կրթությունը հիմնավորող փաստաթղթեր (դիպլոմ, վկայական և այն).
   2) անձնագրի, հանրային ծառայության համարանիշի և/կամ նույնականացման քարտի պատճենը.
   3) աշխատանքային գրքույկը կամ տեղեկանք աշխատանքային գործունեության մասին, ինչպես նաև թրեյնինգներին մասնակցությունը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպում)
   4) 2 լուսանկար՝ 3x4 սմ չափսի:
9. Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ կամ էլեկտրոնային փոստի միջոցով: